ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 Նոյեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

164
(2830)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՊԱԴԱՎԱՏԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՔՆՆԱԴԱՏՈՂԸ ՀԻՄԱ ԻՆՔՆ Է ՄՄԽՈՒՄ ՓՈՂԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը սկսել է մի շարք, որում պարբերաբար անդրադառնում է պետական պաշտոնյաներին, երկրի առաջին դեմքերին սպասարկող մեքենաների ծախսած բենզինի եւ դրա հավելյալ պահանջված քանակին ու հիմնավորմանը: Արդեն անդրադարձել ենք ԱԺ հանձնաժողովների նախագահներին եւ ԱԺ փոխնախագահներին սպասարկող մեքենաներին եւ դրանց հավելյալ տրամադրվող բենզինի քանակությանը: «Ժողովուրդ» օրաթերթը այս անգամ հարցում է ուղարկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմ՝ պարզելու, թե վերջին մեկ տարում որքան բենզին է ծախսել ՀՀ վարչապետին սպասարկող ավտոմեքենան: Հարցրել էինք՝ քանի մեքենա է սպասարկում Փաշինյանին, եւ, ըստ մեքենաների, խնդրել էինք տրամադրել տեղեկատվություն, թե որքան դիզվառելիք է ծախսվել նրան սպասարկող բոլոր ավտոմեքենաների կողմից: Նաեւ խնդրել էինք հավելել՝ որքան բենզին է հավելյալ տրամադրվել վերը նշված բոլոր սպասարկող մեքենաներին եւ ինչ անհրաժեշտությամբ: Բավականին օպերատիվ կերպով վարչապետի աշխատակազմից մեր հարցումը վերահասցեագրեցին Պետական պահպանության ծառայություն: Ավելի ուշ «Ժողովուրդ» օրաթերթին ՊՊԾ պետի պարտականությունները կատարող Արթուր Գասպարյանի ստորագրությամբ ուղարկվեց փաստաթուղթ, որում, մասնավորապես, ասվում է. ««Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված է, որ պետական պահպանությունն իրականացվում է գործունեության բացահայտ եւ գաղտնի մեթոդների եւ միջոցների կիրառման համակցության սկզբունքներով, իսկ նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական պահպանության ծառայությունում պետական եւ ծառայողական գաղտնիքի պաշտպանությունն իրականացվում է՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Հայցվող տեղեկությունը, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ եւ 12-րդ հոդվածների համաձայն, ընդգրկված է գաղտնագրման ենթակա տեղեկությունների հաստատված ցանկում, որի համաձայն՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման կազմակերպման ձեւերի եւ մեթոդների, ինչպես նաեւ նրանց կեցության, սննդի եւ տրանսպորտային սպասարկման, այդ թվում՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների նպատակով միջոցառումների սպասարկման համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ դեպքերում պետության կողմից անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռք բերման գործընթացի վերաբերյալ տեղեկությունները հույժ գաղտնի են, ուստի եւ, նույն օրենքի համաձայն, դասվում են պետական գաղտնիքի շարքին: Ելնելով վերոգրյալից՝ներկայացված հարցերի շուրջ տեղեկություն տրամադրելը հնարավոր չէ»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանին ապօրինաբար լիազորություններից զրկելուց հետո հանձնաժողովի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարում է փոխնախագահ Ռուստամ Բաքոյանը, որը կրթաթոշակ է ստանում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Ռուստամ Բաքոյանը հայտարարագրել է 8 մլն 785 հազար դրամ տարեկան եկամուտ, որից 576 հազար դրամը կրթաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: 8 մլն 209 հազար դրամ Բաքոյանը աշխատանքի վարձատրություն է ստանում ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից: Բաքոյանը հայտարարագրել է անհատական բնակելի տուն, որը գտնվում է Արարատի մարզի Վեդի համայնքում. այն ձեռք է բերվել 2019 թվականին: Բնակելի տան ձեռք բերման եղանակը Բաքոյանը չի նշել: Բաքոյանն այլ անշարժ գույք չի հայտարարագրել եւ չի հայտարարագրել նաեւ տրանսպորտային միջոց: Բաքոյանը, սակայն, հայտարարագրում նշել է, որ 90 օրից ավելի շահագործում է մեքենա, որը փաստացի իրեն չի պատկանում, այսինքն՝ մեքենա է վարում, որն իր անունով չէ: Նա նաեւ Ռուսաստանում մի բնակարանի հետ է առնչվում, որի մասին մամուլը գրել էր, բայց էլի ոչինչ չկա իր անունով պաշտոնապես: Բաքոյանի բանկային դրամական միջոցները տարեսկզբին կազմել են 1 մլն 185 հազար դրամ, սակայն տարեվերջին դրանք զրոյացել են: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 18 հազար ԱՄՆ դոլար եւ 23 մլն դրամ: Բաքոյանի հայրը՝ Քուպար Բաքոյանը, հայտարարագրել է անհատական բնակելի տուն Արարատի մարզի Նոր Կյանք համայնքում: Հոր կանխիկ դրամական միջոցները կազմել են 24 մլն դրամ, իսկ տարեկան եկամուտները կազմել են 442 հազար դրամ, որը կենսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Մայրը՝ Զուրբա Բաքոյանը, հայտարարագրել է նույն բնակարանը, ինչ որ որդին: Մոր տարեկան եկամուտները կազմել են 451 հազար դրամ, որը կենսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Հիշեցնենք նաեւ, որ Բաքոյանը հայտնի է իր իմպուլսիվ բնավորությամբ. պարբերաբար կռիվների ու կրիմինալ պատմությունների կիզակետում է հայտնվում: Անգամ նրա քաղաքացիական կինը հրապարակավ հայտարարեց, որ պատգամավոր Բաքոյանը իրեն պարբերաբար ծեծել է եւ գումար պահանջել:



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե որ քրեական գործով է Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանը հրավիրվել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն եւ հարցաքննվել: Մասնավորապես՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Վիտալի Բալասանյանը ԱԱԾ-ում հարցաքննվել է Արցախի պաշտպանության բանակի պահեստազորի գնդապետ, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմում անվտանգության վարչության պետի տեղակալ գնդապետ Նորայր Ասլանյանի դեմ հարուցված քրեական գործով: Ասլանյանին մեղադրում են հրազենի եւ ռազմամթերքի ենթադրյալ ապօրինի շրջանառության համար. նա 5 ամիս է՝ կալանքի տակ է, եւ գտնվում է Ազգային անվտանգության ծառայության մեկուսարանում: Հիմա էլ քննիչները լսում են Վիտալի Բալասանյանին:

Նախորդող երկու օրերը ՔՊ-ականների համար «տանջալից եւ ծանր» են եղել: Ինչպես հայտնի է, նախորդ երկու օրերին Նիկոլ Փաշինյանն ու նախարարներն ԱԺ-ում են եղել՝ պետբյուջեի քննարկմանը: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ եթե սովորական նիստերի օրերին ՔՊ-ականները մի կերպ են ներկայանում նիստերին, մի մասը գործուղումների է լինում, մի մասն էլ անձնական պատճառներով կամ չի գալիս նիստերին, կամ էլ գալիս ներկայանում ու դուրս է գալիս, ապա Փաշինյանի՝ ԱԺ գնալը փոխել է ՔՊ-ականների առօրյան: Այս երկու օրերին ՔՊ-ականները մեկ մարդու պես ներկայացել են նիստերին ու անգամ նիստերի դահլիճից հազվադեպ են դուրս եկել: Իշխանական պատգամավորներին խմբակցության ղեկավարությունը հրահանգել է այդ օրերին մի կողմ թողնել բոլոր հարցերն ու առանց բացառության գալ, մասնակցել նիստերին: Չնայած Արցախի կորստին ու անվտանգային խնդիրներին՝ ՔՊ-ականները Փաշինյանին հաճոյանալու համար այնպիսի բոցաշունչ ելույթներ էին ԱԺ ամբիոնից ունենում խաղաղության մասին, որ մի պահ տպավորություն էր ստեղծվում, թե մենք Շվեյցարիայում ենք ապրում: Այսպիսով, ՔՊ-ականների մոտ «գեբելսյան» կարգերն են գործում, ամեն բան ի չիք է դառնում, կարեւորը ՔՊ-ն է ու Նիկոլ Փաշինյանը:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽԸ՝ ԽՆԴԻ՞Ր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Վերջին շրջանում Հայաստանի իշխանության ներկայացուցիչները մի թեզ են առաջ տանում, թե Հայաստանում Արցախի պետական կառույցների եւ ինստիտուտների պահպանումը վտանգ է ներկայացնում Հայաստանի համար: Այս հարցի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր, ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանի հետ:

-Մի շարք պատգամավորներ, ԱԺ նախագահը եւ այլք մի այսպիսի թեզ են առաջ քաշում՝ Հայաստանում Արցախի պետական կառույցների եւ ինստիտուտների պահպանումը վտանգ է Հայաստանի Հանրապետության համար: Ի՞նչ վտանգի մասին են խոսում նրանք, հայտնի՞ է Ձեզ:

-Ինձ համար այդ ամենը փոքր-ինչ զավեշտալի է, որովհետեւ դրանք այն մարդիկ են, որոնք պատրաստ են փոխել Հայաստանի Հանրապետության զինանշանը, պատրաստ են հրաժարվել Հայաստանի Հանրապետության հռչակագրից, որոնք պատրաստ են զիջել Հայաստանի համար կենսական տարածքներ: Այսինքն՝ եթե մարդիկ նման զիջումների են պատրաստ՝ Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշերի, տարածքների եւ ինքնիշխանության հաշվին, ապա Դուք այդ մարդկանցից ուրիշ ի՞նչ էիք սպասում, չեմ հասկանում: Այսինքն՝ իրենց քաղաքականությունը հետեւյալն է՝ զիջենք այնքան, ինչքան պետք է, միայն չլինի պատերազմ: Ու այդ զիջումների պարագայում իրենք միշտ բերում են պատերազմի Հայաստանի եւ Արցախի համար:

Վերջին երեք տարիների քաղաքականությունը, պատերազմներն ու տարածքային կորուստները դրա արդյունքն են: Մարդիկ որեւէ դիմադրություն, որեւէ քայլ պատրաստ չեն անել: Դրանք այն մարդիկ են, որոնք Բաքվից թույլտվություն են խնդրում՝ Երասխում գործարան կառուցե՞ն, թե՞ ոչ: Եվ եթե այդտեղ կրակում են, ապա պետք չէ կառուցել գործարան:

-Այսինքն՝ կարո՞ղ ենք արձանագրել, որ հերթական անգամ վախենում ենք Ադրբեջանի արձագանքից, որ սա կարող է զայրացնել հարեւան պետությանը:

-Իհարկե: Իրենք նույնիսկ վախենում են մի երկու բառ խոսել, որ Ադրբեջանը մեր երկիրը Արեւմտյան Ադրբեջան է կոչում, իրենք ամեն հնարավոր բանից վախենում են: Էլի եմ ասում՝ այդ մարդիկ նույնիսկ պատրաստ են անկախության հռչակագրից հրաժարվել: Եվ իրենց կարճ խելքով կարծում են, որ դրանով կկանխեն պատերազմը: Բոլոր այս «կանխարգելիչ» քայլերը միայն պատերազմներ են բերել, ուրիշ ոչինչ:

-Իսկ Ձեզ համար հասկանալի՞ է՝ Արցախի՝ այստեղ տեղափոխված կառավարությունը ինչու է այսպիսի պասիվ կեցվածք ընդունել: Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը հայտնի է, իսկ Արցախի՞նը:

-Ես այդ հարցով չեմ կարող մեկնաբանություն տալ, ազնվորեն եմ ասում: Ես տեղյակ չեմ, չգիտեմ նրանց որոշումները: Չգիտեմ՝ ինչ հոգեվիճակում են վերադարձել եւ ինչպիսի դիրքորոշումներ ունեն, եւ, ըստ այդմ, մեկնաբանել դա չեմ կարող:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅՖԻՑ ՀԵՏՈ

ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովից Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմո Կիլյունենը (Ֆինլանդիա) եւ Բորիանա Աբերգը (Շվեդիա) Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին կոչ են արել աջակցել Հայաստանին: Այդ մասին նշված է ԵԽԽՎ-ի պաշտոնական կայքում:

«Լեռնային Ղարաբաղից Ադրբեջանի ռազմական հարձակման հետեւանքով փախած 106 000 հայերը ինը ամսվա մեկուսացումից հետո Հայաստանում արժանապատիվ կացարան են գտել, եւ նրանց արտակարգ օգնություն է ցուցաբերվել Հայաստանի իշխանությունների քայլերի եւ բնակչության համերաշխության շնորհիվ»,- հայտարարել են համազեկուցողները:

Նրանք նշել են, որ, չնայած չափազանց բարդ հանգամանքներին, ականատես են եղել ժողովրդավարական բարեփոխումներին Հայաստանի շարունակական հանձնառությանը: Նրանց խոսքով՝ Վենետիկի հանձնաժողովի հետ սերտ համագործակցությամբ վերջին տարիներին բազմաթիվ բարեփոխումներ են իրականացվել՝ ուղղված դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը:

«Կոռուպցիայի դեմ պայքարը կառավարության համար առաջնահերթություն է, եւ այն մի քանի կարեւոր քայլեր է ձեռնարկել այդ ուղղությամբ: Կոռուպցիան, այնուամենայնիվ, մնում է բնակչության դժգոհության հիմնական պատճառը, եւ մշտական ջանքեր են պահանջվում»,- եզրակացրել են Կիլյունենն ու Աբերգը:

Հայաստանում գտնվելու ընթացքում համազեկուցողներն այցելել են Նախիջեւանի հետ սահմանին գտնվող Երասխ եւ հանդիպել Լեռնային Ղարաբաղից վերջերս տեղահանված անձանց ընտանիքների հետ, որոնք տեղափոխվել են Արտաշատ եւ Երեւան:

ԲԱՔՈՒՆ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ հրաժարվում են Վաշինգտոնում Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպումից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը նախ արձագանքել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում տեղի ունեցած լսումների ժամանակ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Ջեյմս Օ-Բրայենի հայտարարություններին՝ դրանք անվանելով «կողմնակալ, անարդյունավետ, անհիմն եւ անընդունելի»:

Ադրբեջանում դժգոհության ալիք է բարձրացրել Օ-Բրայենի այն հայտարարությունը, որ ԱՄՆ-ն չեղարկել է բարձրաստիճան այցերն Ադրբեջան, իսկ այդ երկրի հետ ԱՄՆ-ի հարաբերությունները չեն կարող նորմալ լինել, քանի դեռ ԱՄՆ-ն առաջընթաց չի տեսել խաղաղության բանակցություններում:

Ի պատասխան՝ Ադրբեջանի ԱԳՆ-ում նշել են, որ հարաբերությունները չեն կարող միակողմանի լինել, ուստի նույն մոտեցումը կկիրառի Ադրբեջանը:

Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարել է, որ նպատակահարմար չեն համարում ԱՄՆ-ի կողմից Ադրբեջան բարձր մակարդակի այցերի հնարավորությունը:

Հայտարարության մեջ նաեւ նշվում է, որ ԱՄՆ-ի միակողմանի մոտեցումը կարող է հանգեցնել նրան, որ ԱՄՆ-ն կորցնի իր միջնորդական դերը:

ՆԵՐԴՆՈՒՄ ԵՆ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պետական կառավարման համակարգի եւ տեղական ինքնակառավարման մարմիններում այսուհետ կտեղադրվեն ՊՈՍ (POS) տերմինալներ: Ընդ որում՝ խոսքը «Էվոկաբանկ»-ի տերմինալների մասին է: Տեղեկացանք, որ այս տերմինալների անհրաժեշտությունն առաջացել է՝ անկանխիկ գործառույթների անցմամբ պայմանավորված: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եւ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի միջեւ այս տարի կնքվել է «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասին» պայմանագիրը, որի շրջանակում իրականացվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում POS տերմինալների տեղադրումն ու սպասարկումը վճարումներն անկանխիկ եղանակով ընդունելու նպատակով: Մենք տեղեկացանք, որ այժմ գույքագրում է իրականացվում՝ հասկանալու համար, թե պետական կառավարման համակարգի եւ տեղական ինքնակառավարման մարմիններում վերջիններիս գործունեության համար որքան տերմինալներ են անհրաժեշտ: Հետաքրքիր է, որ բանկի հետ պայմանագիր կառավարությունը ստորագրել է այս տարվա փետրվարին, սակայն նախագծի հիմնավորման կամ նկարագրության մեջ այդպես էլ չի մատնանշվում, թե ինչու է ընտրվել հենց այդ բանկը:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՌԴ-Ի

Եվրահանձնաժողովը ներկայացրել է Ռուսաստանի Դաշնության դեմ պատժամիջոցների տասներկուերորդ փաթեթը: Այն ներառում է պատժամիջոցներ նաեւ Ռուսաստանի Դաշնության նախկին նախագահ Դմիտրի Մեդվեդեւի որդու եւ Վլադիմիր Պուտինի ազգականի նկատմամբ: Այս մասին հայտնել է The Guardian-ը:

Պուտինի զարմուհի Աննա Ցիվիլեւան ղեկավարում է «Հայրենիքի պաշտպաններ» հիմնադրամը, որն աջակցում է Ուկրաինայում կռվող ռուս զինվորներին: Ընդլայնված ցուցակում ընդգրկվել է նաեւ Իլյա Մեդվեդեւը, ում անունն ու ծննդյան ամսաթիվը համընկնում են նախկին նախագահ Դմիտրի Մեդվեդեւի միակ որդու անվան եւ ծննդյան տարեթվի հետ:

Նա մեղադրվում է Ուկրաինայում ապատեղեկատվության եւ քարոզչական արշավ կազմակերպելու համար: Պաշտոնյաների հարազատների, այդ թվում՝ Պուտինի ընտանիքի ընդգրկումը Կրեմլում զայրույթ կառաջացնի. գրում է թերթը: Հավելենք, որ Եվրոպական միության բարձրաստիճան դիվանագետ Ժոզեպ Բորելը Եվրահանձնաժողովի հետ նոյեմբերի 15-ի նիստում անդամ երկրներին ներկայացրել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների տասներկուերորդ փաթեթի առաջարկը:

ՀԱՊԿ–Ն ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից դուրս գալու որոշում չունի»,- լրագրողների հետ ճեպազրույցում հայտարարել է Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը:

«ՀԱՊԿ-ից դուրս գալու որոշում մենք չենք կայացրել: Այլ հարց է, թե ՀԱՊԿ-ը իրեն ինչպես է դիրքավորում: Արդյոք դա մի կառո՞ւյց է, որը ստեղծվել է ինչ-որ գործողություն անելու համար այն դեպքում, երբ այդ կառույցի անդամներից մեկին որեւէ վտանգ է սպառնում, թե՞ ոչ: Այս հարցն ուղղված է ՀԱՊԿ անդամ այլ երկրներին, որովհետեւ, օրինակ, երբ Հայաստանն էր ՀԱՊԿ-ում նախագահող երկիր, ՀԱՊԿ-ը գործողություն իրականացրեց կառույցի անդամ երկրների մեկում: Իսկ երբ Հայաստանի դեմ գործողություն իրականացվեց, եւ դա ընթացքի մեջ է, ՀԱՊԿ-ն սկսեց պատմել այն մասին, որ ինքը պատրաստ է դիտորդներ ուղարկել, պատրաստ է զորավարժություններ անել՝ չհստակեցնելով, թե որտեղ են այդ զորավարժությունները իրականացվելու»,- ասաց ԱԺ նախագահը:

Նա անդրադարձավ ՀԱՊԿ անդամ որոշ երկրներից հնչող հայտարարություններին, թե իրենք պատրաստ էին դիտորդական առաքելություն ուղարկել, սակայն Հայաստանը չի ցանկացել:

«Երբ որ ՀԱՊԿ-ի մեր գործընկերներն ասում են՝ «մենք պատրաստ էինք, դուք չուզեցիք», ես ուզում եմ հարցնել՝ իսկ որտե՞ղ էին իրենք պատրաստ, իրենք որտե՞ղ էին կանգնելու, որտե՞ղ էին այդ գործողություններն անելու, եթե միաժամանակ ասում էին, թե Հայաստանի ու Ադրբեջանի սահմանը չի խախտվել: Ո՞նց չի խախտվել: Ջերմուկում, մնացած հատվածներում սահմանը չի՞ խախտվել: Այսինքն՝ եթե այդ սահմանն ամորֆ ինչ-որ բան է, ապա որտե՞ղ էր գալու այդ դիտորդական առաքելությունը եւ ի՞նչն էր դիտարկելու: Այնպես որ, այդ աճպարարությունը, որ արվում է, մեզ համար ուղղակի անընդունելի է»,- ասաց Սիմոնյանը:

Ալեն Սիմոնյանը մեկնաբանեց ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի այն հայտարարությունը, թե ճիշտ կլինի, որ Հայաստանի պաշտոնյաները մասնակցեն ՀԱՊԿ-ի նիստերին եւ այդ հարցերի մասին ուղիղ խոսեն: «Նախ՝ գնացել ենք, ասել ենք, նամակով դիմել ենք թե՛ ՀԱՊԿ-ին, թե՛ մեր դաշնակցին՝ կոնկրետ կետերը նշելով: Բայց մենք տեսնում ենք, որ որեւէ գործողություն տեղի չի ունենում, եւ նույնիսկ հնչում են արտահայտություններ, թե ո՞նց եք պատկերացնում, որ ռուս, ղազախ, բելառուս զինվորները գային, կռիվ տային»,- ասաց Սիմոնյանը՝ հավելելով, որ ՀԱՊԿ-ի կողմից նույնիսկ քաղաքական գնահատական չի հնչել Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիային:

ԱՅՑԵԼԵԼ Է

ԲԵԼԳԻԱՅՈՒՄ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը նոյեմբերի 15-ին Բրյուսելում հանդիպել է ԵՄ հարեւանության եւ ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեիի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ ԱԳՆ-ից հայտնում են, որ հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ԵՄ գործընկերության ընդգրկուն օրակարգի հարցեր:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել առկա երկխոսության եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնման հնարավորությունների շուրջ: Այս համատեքստում կարեւորվել է նաեւ նոյեմբերի 15-ին Հայաստան-ԵՄ քաղաքական եւ անվտանգային հարցերով երկխոսության երկրորդ բարձրաստիճան նիստի անցկացումը Բրյուսելում:

ՀՀ-ԵՄ միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման նպատակով ընդգծվել է ԵՄ տնտեսական եւ ներդրումային պլանի շրջանակներում ՀՀ համար 2,6 միլիարդ եվրո արժողությամբ առաջատար նախաձեռնությունների արդյունավետ իրականացումը: Տարածաշրջանային ծրագրերի արդյունավետության ապահովման տեսանկյունից Արարատ Միրզոյանն ընդգծել է «Սեւծովյան էլեկտրական մալուխ» նախագծին ՀՀ միանալու նշանակությունը՝ ՀՀ վարչապետի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահի հոկտեմբերի համատեղ հայտարարությանը համահունչ:

ՀՀ ԱԳ նախարարը ներկայացրել է նաեւ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, որը ոչ միայն կարող է տնտեսական առավելություններ տալ տարածաշրջանի երկրներին, այլեւ դառնալ խաղաղության կարեւոր երաշխիք: Անդրադարձ է կատարվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ միջազգային ջանքերին:

ՀՀ ԱԳ նախարարը եւ ԵՄ հանձնակատարը քննարկել են նաեւ Ադրբեջանի կողմից ԼՂ-ում էթնիկ զտման հետեւանքով բռնի տեղահանված 100 հազարից ավել հայ փախստականների կարիքների եւ իրավունքների հասցեագրման հարցերին, այդ թվում նաեւ՝ միջազգային գործընկերների աջակցությամբ իրականացվող քայլերին:

Միրզոյանը հանդիպում է ունեցել նաեւ Բելգիայի Թագավորության արտաքին գործերի, եվրոպական հարցերի եւ արտաքին առեւտրի, դաշնային մշակութային հաստատությունների նախարար Հաջա Լահբիբի հետ:

Բելգիայի ԱԳ նախարարի՝ Երեւան այցի շրջանակներում կայացած քննարկումներին Արարատ Միրզոյանը եւ Հաջա Լահբիբը հանգամանալից անդրադարձել են թե՛ երկկողմ հարաբերությունների եւ ՀՀ-ԵՄ գործընկերության ընդլայնմանն առնչվող հարցերին, ընթացիկ ծրագրերին, թե՛ տարածաշրջանային օրակարգին:

Զրուցակիցները գոհունակություն են հայտնել երկու երկրների միջեւ բարձր մակարդակի քաղաքական երկխոսության, Երեւանում Բելգիայի ռեզիդենտ դեսպանության բացման առնչությամբ եւ մտքեր փոխանակել առեւտրատնտեսական, տեղեկատվական տեխնոլոգիաների, մշակույթի, մարդկանց միջեւ շփումների եւ այլ ոլորտներում համագործակցության խորացմանը վերաբերող հարցերի շուրջ:

Երկուստեք կարեւորվել են ՀՀ-ԵՄ գործընկերության խորացման ուղղությամբ իրականացվող քայլերը՝ դրական գնահատելով առկա արդյունքներն ու նախանշվող ծրագրերը:

Հայաստանի եւ Բելգիայի ԱԳ նախարարները քննարկել են նաեւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող վերջին զարգացումները:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԵՑ

Ադրբեջանի թվային զարգացման եւ տրանսպորտի նախարար Ռաշադ Նաբիեւն առաջարկել է «Զանգեզուրի միջանցքը» ներառել Ադրբեջանի զարգացման ծրագրում:

«Զանգեզուրի միջանցքի ներառումը Ադրբեջանի ազատագրված տարածքների «ճանապարհային քարտեզում» կարող է խթան հանդիսանալ Միջին միջանցքի զարգացման համար»,- ասել է Նաբիեւը «Միջազգային տրանսպորտային-լոգիստիկ միջանցք. զարգացման ազդակներ Զանգիլանից» թեմայով միջազգային համաժողովում. տեղեկացրել է APA-ն:

Նա ասել է. «Զանգեզուրի միջանցքը մեծ պոտենցիալ ունի որպես Միջին միջանցքի մաս Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ փոխադրումներում... Խորհրդային Միության ժամանակներում Զանգեզուրի միջանցքով տեղափոխվում էր 7-12 մլն տոննա բեռ: Բայց, ցավոք, Հայաստանը, հակառակ եռակողմ հռչակագրի, վերջին երեք տարիներին միջանցքը չի բացել, բայց միշտ կան այլընտրանքներ եւ այլ ընտրություն»:

ՀԱՊԿ–ԻՆ ՉԻ ԴԻՄԵԼ

«Հայաստանի ղեկավարության կողմից այդ թվում կազմակերպությանը, պաշտոնական հայտարարություններ չեն եղել, չեն եղել հայտարարություններ, որ Հայաստանը դուրս է գալիս Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից: Այդ կապակցությամբ փաստաթղթեր չեն եղել, ես անձամբ չեմ տեսել»,- ասել է Սիդորովը երեկ Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում:

Նրա խոսքով՝ կազմակերպության ներսում որեւէ խոսակցություն չկա այն մասին, որ ՀԱՊԿ-ը կորցրել է հետաքրքրությունը կովկասյան տարածաշրջանի նկատմամբ կամ ծրագրում է հեռանալ Հայաստանից: Սիդորովի պնդմամբ՝ որեւէ մեկի մտքով նման բան չի անցնում:

ՎԱՅՐ Է ԴՆՈՒՄ ՄԱՆԴԱՏԸ

«Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը վայր է դնում ավագանու անդամի մանդատը.

«Ես հրաժարվում եմ մանդատից, մեր խմբակցությունը կղեկավարի Մանուկ Սուքիասյանը, մեր մյուս անդամներն իրենց ակտիվությամբ կարդարացնեն երեւանցիների տված քվեն, ակնկալում ենք, որ նույնիսկ այն քաղաքացիները, որոնք մեզ ձայն են տվել, ավագանիում՝ ի դեմս «Հայաստան» խմբակցության, կտեսնեն իրենց պաշտպանների»,-հայտարարեց Թեւանյանը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ հոկտեմբերի 24-ին էր գրել, որ Անդրանիկ Թեւանյանն առաջիկայում հայտարարելու է ավագանու անդամի մանդատը վայր դնելու մասին:

ԱՊՕՐԻՆԻ

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2020թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների կողմից Արարատի մարզի Եղեգնավան եւ Լուսառատ գյուղերի տարածքներում՝ Արաքս գետի ավազանում իրականացված չափագրման արդյունքում արձանագրված՝ ՍՊ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության տեղամասից դուրս ավազակոպիճի ապօրինի արդյունահանման դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում իրականացված քննությամբ պարզվել են նշված ՍՊ ընկերության տնօրենի կողմից ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու, ինչպես նաեւ հողը փչացնելու դեպքերի բոլոր հանգամանքները:

Մասնավորապես, քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ընկերության տնօրենը, 2020թ. դեկտեմբերի 21-ից մինչեւ 2022թ. օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում չունենալով իրավունք, որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի տեղամասում շեղվել է 2012թ. տրամադրված, ապա 2014թ. փոփոխությունների ենթարկված թույլտվությամբ նախատեսված կոորդինատներից եւ դուրս եկել լեռնահատկացման ակտով տրամադրված սահմաններից:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Լուսառատ գյուղի տարածքում, առանց ընդերքօգտագործման իրավունքի, տեխնիկաների օգտագործման միջոցով ընկերության կողմից արդյունահանվել է ընդհանուր 2748մ3 ծավալով լեռնային զանգված, այդ թվում՝ վճարման ենթակա 146.156 ՀՀ դրամի չափով բնօգտագործման վճար առաջացնող 716,1մ3 ծավալով ավազակոպիճ՝ միաժամանակ չվճարելով 500.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքը:

Պետությանը պատճառվել է խոշոր չափերի գույքային վնաս: Հիշյալ գործողությունները հանգեցրել են նաեւ հողի որակի վատթարացման, մեծածավալ չափերի ընդերքից արդյունահանված օգտակար հանածոների կորստի, որն առաջացրել է տվյալ վայրում առկա օգտակար հանածոների հետագա շահագործման դժվարացումը, ինչպես նաեւ խախտվել է Արաքս գետի հունը:

Բացի այդ, ընկերության տնօրենի վերոնշյալ գործողությունների հետեւանքով դեգրադացիայի է ենթարկվել համայնքային սեփականության՝ 1379մ2 մակերեսով ջրային ֆոնդի եւ 11953մ2 մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքները: Արդյունքում 13332մ2 մակերեսով հողային ռեսուրսներին պատճառվել է խոշոր չափերի գույքային վնաս, ինչպես նաեւ տեղի է ունեցել հողի բերրի շերտի ոչնչացում եւ վնասում:

Միեւնույն ժամանակ, ՍՊ ընկերության տնօրենը, շրջանցելով ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված պահանջները, առանց լիցենզիայի ընդերքն օգտագործելով, չի վճարել գանձման ենթակա 5.000.000 ՀՀ դրամի չափով տուգանքը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ ընկերության տնօրենին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մասով եւ 381-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության ընթացքում պետությանը պատճառված ամբողջ վնասը՝ 6.500.000 ՀՀ դրամի չափով, վերականգնվել է:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

ԶԵՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ազատ Ջոհրաբի Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, չունենալով ակոսափող հրազենի փամփուշտներ պահելու եւ կրելու թույլտվություն, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում՝ քննությամբ չպարզված կոնկրետ օրը՝ Մարտունու շրջանում գտնվելու ժամանակ, ապօրինի կերպով ձեռք է բերել կրակելու համար պիտանի, ռազմամթերք հանդիսացող 59 հատ 7,62մմ /7,62x39/ տրամաչափի մարտական փամփուշտներ՝նախատեսված «АК» տեսակի ինքնաձիգների, «РПК» տեսակի ձեռքի գնդացիրների եւ համապատասխան տրամաչափի ակոսափող այլ զենքերի համար, եւ 5 հատ կրակվելու համար պիտանի, ռազմամթերք հանդիսացող 4.45մմ /5.45x39/ տրամաչափի փամփուշտներ՝ նախատեսված «АК-74» տեսակի ինքնաձիգների, «РПК-74» տեսակի ձեռքի գնդացիրների եւ համապատասխան տրամաչափի ակոսափող այլ զենքերի համար:

Այդ զենքերը պահելու կամ օգտագործելու իրավունք չունենալու պայմաններում, ինչպես նաեւ անհապաղ ՀՀ ոստիկանության մոտակա բաժին հանձնելու փոխարեն, պահել է իր՝ Արտաշատ համայնքի Դվին բնակավայրի Երիտասարդական փողոցի 38-րդ հասցեի տան տարբեր հատվածներում, որոնք հայտնաբերվել ու վերցվել են 2022 թվականի օգոստոսի 9-ին՝ Ազատ Ղազարյանի բնակարանում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Օրերս Վանաձորի ոստիկանության Տարոնի բաժին ահազանգ է ստացվել, որ շենքերից մեկի պատշգամբում անձի անշնչացած մարմին է կախված:

Նախաքննության արդյունքում պարզ է դարձել, որ մահացածը Տավրոսի փողոցի բնակիչ, 1940 թվականին ծնված քաղաքացի է:

83-ամյա քաղաքացու դին հայտնաբերվել է տան պատշգամբի ճաղավանդակից կախված:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նույն օրը Վանաձորի ոստիկանության Բազումի բաժին հաղորդագրություն է ստացվել այն մասին, որ քաղաքացին որովայնի հատվածում դանակի հարվածներից ստացած վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց: Ավելի ուշ պարզ դարձավ, որ 1950 թվականին ծնված Աղայան փողոցի բնակիչը ինքնասպանության փորձ է կատարել: Տեղում օգնություն են ցուցաբերել ընտանիքի անդամները, ապա տեղափոխել են հիվանդանոց, քանի որ ունեցել է ուղեկցող մի շարք հիվանդություններ: 73-ամյա քաղաքացու վիճակը կայուն է:

Մ.Ղ.

ՀԱՅՏՆԵՑ

ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ՉԷ

Ֆատիմա Ջուրաբովան Հայաստանի Հանրապետությունում արգելանքի տակ չէ: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ՔԿ նախագահի մամուլի քարտուղար Գոռ Աբրահամյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Նկատի ունենալով մի շարք լրատվամիջոցներից բանավոր հարցում ստացած լինելու հանգամանքը՝ հայտնում եմ հետեւյալը.

2023 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին հաղորդում է ստացվել մի քաղաքացուց այն մասին, որ 2023թ. նոյեմբերի 8-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, իր ընկերոջ եղբոր դուստր Ֆատիմա Ահմադի Ջուրաբովան Մին. Վոդի-Երեւան չվերթով ժամանել է «Զվարթնոց» օդանավակայան, եւ մինչ օրս որեւէ տեղեկություն չունեն նրա վերաբերյալ:

Փաստի առթիվ 2023 թվականի նոյեմբերի 11-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ (տվյալ պահին անհայտ կորելու հիմքով), որով նախաքննությունն իրականացվում է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում:

Նոյեմբերի 14-ին Ֆաթիմա Ջուրաբովան ՀՀ ՆԳՆ ոստիկանության ԵՔՎ Քանաքեռ-Զեյթունի բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է, ապա ներկայացվել է վարույթ իրականացնող մարմին:

Նա հարցաքննվել է որպես վկա եւ ցուցմունք տվել Ռուսաստանի Դաշնության Ինգուշեթիայի Հանրապետությունում պարբերաբար բռնությունների ենթարկվելու մասին: Նշել է, որ համացանցով փնտրել եւ գտել է Հայաստանում գործող մի կազմակերպություն, որը զբաղվում է ընտանիքում բռնությունների ենթարկվածներով: Կապ է հաստատել այդ կազմակերպության աշխատակցի հետ, որը, իմանալով իր պատմությունը, դեպի Հայաստանի Հանրապետություն գնել է տոմս, որից հետո սույն թվականի նոյեմբերի 8-ին ժամանել է Հայաստան: Հայաստանում բնակություն է հաստատել Աշտարակ քաղաքում՝ կազմակերպության կողմից վարձակալած վայրում: Նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում որեւէ բռնության չի ենթարկվել, որեւէ մեկն իրեն վնաս չի հասցրել:

Հայտնել է, որ տեղյակ է այն մասին, որ իր հորեղբայրները գտնվում են ՀՀ-ում, վերջիններս հանդիպել են իրեն: Նշել է, որ չի ցանկանում վերադառնալ Ինգուշեթիա սպառնալիքների պատճառով:

Վերոնշյալ վարույթի շրջանակում Հայաստանի Հանրապետության ՆԳՆ Ոստիկանության աշխատակիցներին տրվել է հանձնարարություն, այդ թվում՝ Ֆաթիմա Ջուրաբովայի անվտանգությունն ապահովելու վերաբերյալ: Վերջինս արգելանքի տակ չէ, քննչական բաժնում գտնվելու ընթացքում ընտանիքի անդամներից, հարազատներից որեւէ մեկի հետ չի հանդիպել եւ շփում չի ունեցել:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 79 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

«ԻՋԵՎԱՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ»

«Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում է ուղարկել՝ պարզելու, թե Տավուշի մարզպետարանի աշխատակազմում մարզի Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան համայնքների քանի բնակիչ է աշխատում: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում, ըստ հաստիքացուցակի, առկա է 88 հաստիք: Ներկա պահին մարզպետի աշխատակազմում Դիլիջանի, Նոյեմբերյանի եւ Բերդի տարածաշրջանից աշխատակիցներ չկան»:

Մարզպետի պատասխանից պարզ է, որ Տավուշի մարզպետարանի բոլոր աշխատակիցները Իջեւան համայնքի բնակիչներ են: Այսինքն՝ ոչ թե Տավուշի մարզպետարան է, այլ Իջեւանի մարզպետարան:

245 ՄԻԼԻՈՆ՝ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ Արցախից բռնագաղթած, Տավուշի մարզում հաստատված 3607 անձանց կարիքների համար ՀՀ կառավարության որոշումներով նախատեսվել է 264,0 միլիոն դրամ, նոյեմբերի 8-ի դրությամբ ընդհանուր ծախսը կազմել է 245,6 միլիոն դրամ, որից՝ հյուրանոցային ծախսեր՝ 216,8 միլիոն դրամ, սննդի ծախսեր՝ 27,6 միլիոն դրամ, այլ նպաստներ բյուջեից՝ 1,2 միլիոն դրամ: Մարզպետարանից նաեւ տեղեկացրել են, որ կառավարության աջակցության ծրագրերով Արցախից բռնի տեղահանված անձանցից ներկայումս մարզի հյուրանոցներում, հյուրատներում, հանգստյան տներում եւ այլ օբյեկտներում չեն բնակվում:

ՈՐՈՆՔ ԵՆ «ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ»

Վերջերս Բերդ համայնքի սահմանամերձ Վերին Կարմիրաղբյուր գյուղի միջակարգ դպրոցի 8-րդ դասարանում անգլերեն լեզվի գրավոր աշխատանքի ժամանակ ուսուցուհի Ասյա Ավագյանն առանց հիմքի գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտուհուն կասկածել է գրավոր առաջադրանքի պատասխանները արտագրելու մեջ, գրավոր աշխատանքը խլել է աղջկանից, վիրավորական արտահայտություններ թույլ տվել նրա հասցեին: Խիստ վիրավորված աշակերտուհին թողել է դասարանը, արցունքն աչքերին՝ գնացել է իրենց տուն: Այդ միջադեպը քննարկվել է դպրոցի մանկավարժական խորհրդում, որտեղ Ասյա Ավագյանը հայտնել է, թե այդ աշակերտուհին եւ իր ծնողները պետք է իրենից ծնկաչոք ներողություն խնդրեն: Ասյա Ավագյանը կամայականություններով աչքի է ընկել նաեւ դպրոցի այլ աշակերտների հետ հարաբերություններում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել՝ պարզելու, թե ինքը տեղյակ է արդյոք Վ. Կարմիրաղբյուրի դպրոցում կատարվածից, ինչ միջոցներ է ձեռնարկել այդ առթիվ: Մարզպետի պատասխանում նշված է. «Տավուշի մարզպետի աշխատակազմը քաջատեղյակ է Վերին Կարմիրաղբյուրի դպրոցում տեղի ունեցածի մասին եւ իր լիազորությունների սահմաններում ձեռնարկել է բոլոր միջոցները»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՄԱՆՈՐ

ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Մայրաքաղաքի գլխավոր տոնածառի լույսերն այս տարի կվառվեն դեկտեմբերի 10-ից 15-ն ընկած ժամանակահատվածում:

Այս մասին հայտարարել է Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը:

Խոսելով ամանորյա ձեւավորվման համար ծախսվող գումարի մասին՝ Գրիգորյանն ասաց, որ այս պահին առկա տվյալները խիստ նախնական են, ուստի հիմա թիվ հրապարակել չի կարող, միայն ձեւավորման աշխատանքների ավարտից հետո կարող է թվեր հրապարակել:

Սուրեն Գրիգորյանը միայն նշեց, որ ամանորյա իրերի համար գումար գրեթե չի ծախսվի, կօգտագործվի անցած տարի ձեռք բերված գույքը, միայն կկատարվեն վերանորոգման աշխատանքներ:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցին, թե ինչ են անելու, որպեսզի տոնական միջոցառումները միայն Կենտրոն վարչական շրջանում կենտրոնացված չլինեն, այլ բաշխվեն նաեւ մյուս վարչական շրջաններում, Սուրեն Գրիգորյանն ասաց. «Այդքան էլ ճիշտ չէ, որ բոլոր միջոցառումները Կենտրոն վարչական շրջանում են կենտրոնացված, բայց այն, որ ամենաճոխ հատվածը Կենտրոնում է եղել, դա այդպես է եղել: Մենք պետք է Կենտրոնից կամաց-կամաց տարածվենք դեպի մայրաքաղաքի հեռավոր հատվածներ: Միեւնույն ժամանակ, եթե Կենտրոն վարչական շրջանում է միջոցառումներն արվում, դա միայն տեղի բնակիչների համար չէ, այլ վարչական շրջանների բնակիների համար էլ է: Ի վերջո, գլխավոր տենածառը Կենտրոն վարչական շրջանում է լինում: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի էլ, վստահ եմ, որ վարչական շրջաններում էլ միջոցառումներ կլինեն, բայց մեր հեռահար նպատակն այն է, որ տարածվենք ավելի հեռու հատվածներ:

Այս տարի Ամանորի լուսավորությունը իրականացնելիս հիմնականում օգտագործելու ենք նախորդ տարվա ձեռք բերած գույքը»:

Անդրադառնալով անցած տարի Հանրապետության հրապարակում եւ շենքերի վրա կատարված աշխատանքի շուրջ քննարկումներին՝ Գրիգորյանն արձանագրեց, որ, ինչպես խոստացել էին, շենքերի բոլոր անցքերը փակվել են:

«Հաշվի առնելով, որ այս տարի չունենք այն հրատապության հրամայականը, որն ունեցել ենք անցած տարի՝ կապված «Մանկական Եվրատեսիլ»-ի բացման արարողության հետ, այս տարի տոնածառի ամանորյա լույսերը ավելի ուշ են վառվելու: Հանրապետության հրապարակի շենքերի զարդարումն իրականացվելու է մի փոքր այլ ձեւով: Անցած տարվա պատկերն այս տարի էլ կունենանք, բայց տեխնիկական առումով պատրաստվելու են թեթեւ մետաղական կոնստրուկցիաներ՝ կարկասներ, որոնց վրա ամրացվելու են սարքավորումները: Անցքեր էլի լինելու են, բայց անհամեմատ փոքր քանակի, եւ լինելու են հիմնականում այն անցքերը, որոնք անցած տարի բացվել, լցվել են: Այս տարի նորից բացվելու են, օգտագործվելու են եւ, ինչպես անցած անգամ, ծրագրի իրականացումից հետո լցվելու են»,- ասաց Գրիգորյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊԱՐՋՎԵՑ

ԾԱՌԵՐ ԵՆ ՀԱՏՎԵԼ ⇨

Կոմիտասում գտնվող Մերգելյան այգում Երեւանի քաղաքապետարանի «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը երեկ հաստաբուն ու առողջ ծառեր է կտրել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմել է Երեւանի ավագանու անդամ Զարուհի Փոստանջյանը: «Այս գարնանը սկսեցին Մերգելյանի տարածքից հեռացնել սրճարանները եւ փոքրիկ կրպակները՝ այն հիմնավորմամբ, որ վերակառուցելու են, ավելորդ շինություններից ազատելու են այդ տարածքը, բայց պարզվեց՝ այդ ամենի նպատակն այն է, որ նոր կառուցապատում այդտեղ իրականացնեն: Այդ տարածքում հին, հաստաբուն ծառեր էին ամբողջությամբ. այն մարդիկ, որոնք օգտագործում էին սրճարաններն ու կրպակները, նաեւ ծառերի համար էին հոգում:

Իրենք դիտավորյալ ամբողջ ամառ չջրեցին, ծառերը միտումնավոր վնասեցին, իբր թե հին է, պետք է կտրեն, բայց նույնիսկ այդ դեպքում հսկայական քանակի ծառ է մնացե: Հիմա շուրջ 30 ծառերի վրա կանաչապատման ՀՈԱԿ-ն այսօր բերել, քաղաքապետարանի որոշում է փակցրել, ու հիմա կտրում են: Կանաչ ծառեր են հաստաբուն, վրաները փակցրել են, որ ենթակա է այս ծառը հեռացման, ու կտրել են»,-ասաց Փոստանջյանը:

Ավագանու անդամը նաեւ պատմեց, որ ոստիկանություն են բերել այգի, որպեսզի թույլ չտան խոչընդոտել իրենց գործը:

«Երբ նկարում էի, ինձ վրա հարձակվեցին, հեռախոսս վերցրին ու թույլ չտվեցին նկարել»,-հավելեց Փոստանջյանը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԸ

Վաղարշապատի համայնքային ոստիկանները ստացել էին տեղեկություն, որ Էջմիածնի Չարենցի փողոցում մի քաղաքացի կազմակերպել է սալիկների արտադրություն, սակայն չունի համապատասխան փաստաթղթեր:

Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ ոստիկաններն այցելել են այդ քաղաքացուն: Նա ոստիկաններին ներս է հրավիրել եւ ասել, որ ունի արտադրամաս, սալիկներ է արտադրում եւ իրացնում, բայց առանց փաստաթղթավորման:

Վաղարշապատի ոստիկանները փաստաթղթերն ուղարկել են քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՏՐՎԻ

Բնակարանային ապահովման ուղղությամբ նախատեսված շուրջ 4 միլիարդ դրամի շրջանակում մոտ 2 միլիարդ դրամի աջակցություն կտրամադրվի 2020-ի պատերազմից հետո ԼՂ-ի առանձին շրջաններից տեղահանված 4030 ընտանիքի՝ բնակելի անշարժ գույք ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու: Այդ մասին նոյեմբերի 16-ին՝ Ազգային ժողովում 2024-ի պետբյուջեի քննարկման ժամանակ, ասաց նախարար Նարեկ Մկրտչյանը:

«Նշեմ, որ արդեն իսկ հավաստագիր ենք տրամադրել շուրջ 3700 հայրենակցի, որոնցից ավելի քան 1700 հավաստագիրն արդեն իսկ իրացվել է»,- ասաց նախարարը:

Ըստ Նարեկ Մկրտչյանի՝ կիրականացվի նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ գյուղական բնակավայրերում անհատական բնական տուն կառուցելու պետական աջակցության ծրագիրը:

«Այս նպատակով գործընկեր կազմակերպությունների կողմից տրամադրված, հիփոթեքային վարկ ստացած 540 շահառուներին նախատեսվում է աջակցություն՝ շուրջ 467,5 միլիոն դրամի շրջանակում: Այս պահի դրությամբ արդեն հաստատված 200 դիմում ունենք, այսինքն՝ ՀՀ-ի շուրջ 80 սահմանային բնակավայրերում այժմ նոր 200 բնակարաններ են կառուցվում, եւ մենք պետք է այս ծրագրի լավարկման ուղղությամբ քայլեր անենք 2024 թվականին»,- ասաց նա:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Հովթեր» ՍՊԸ-ի՝ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի վարչական տարածքում էներգետիկ/փիէկի կառուցում նպատակով Հրազդան գետից 2334.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17.00-ից-18.00-ն դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ Է

Ի՞ՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

Վերջերս իրավապահ մարմինները բերման էին ենթարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊ-ական Արման Բարխուդարյանին, կոմունալ բաժնի պետ Աշոտ Խաչատրյանին, առեւտրի բաժնի պետ Հայր Արամյանին եւ կոմունալի աշխատակից Վան Հարությունյանին՝ գնումների գործընթացը ոչ պատշաճ կատարելու կասկածանքով:

Ըստ տեղեկությունների՝ կասկածյալների ցանկում է նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ Սաշա Կատվալյանը, որը զբաղեցնում էր Երեւանի քաղաքապետի խորհրդականի պաշտոնը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Կատվալյանը նշել էր, որ կապ չունի այդ ամենի հետ, իրեն չեն կանչել հարցաքննության, եւ չնայած որ Բարխուդարյանն իր ընկերն է, եւ ինքը խորհուրդներով նրան պարբերաբար օգնել է, դա ոչինչ չի ենթադրում:

Սակայն, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունները ճիշտ հակառակի մասին են: Մասնավորապես՝ մի շարք աշխատակիցներ հայտնեցին, որ Սաշա Կատվալյանը ոչ ուղղակի եւ երբեմն էլ ուղղակի կերպով դրդել է աշխատանքից ազատման դիմումներ գրել իր մտերիմ-հարազատներին այդ պաշտոններին ու հաստիքներին տեղավորելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրեց, թե Սաշա Կատվալյանը ինչ ունեցվածք է կուտակել իր պաշտոնավարման տարիներին:

Եվ այսպես, Սաշա Լյովայի Կատվալյանն այս հայտարարագիրը ներկայացրել է որպես Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար:

Կատվալյանն ունի 2 անչափահաս երեխա՝ Լեւոն եւ Արեգ Կատվալյանները: Կատվալյանի կինը՝ Շուշանիկ Ղեւոնդյանը, աշխատում է Երեւանի քաղաքապետարանում որպես Հանրակրթության վարչության առաջին կարգի մասնագետ: Կատվալյանի հետ համատեղ բնակվում է նաեւ Անահիտ Սարգսյանը:

Կատվալյանը հայտարարագրել է 3 անշարժ գույք, որից 1-ը հողամաս է, մյուսը, ՀՀ օրենսդրության համաձայն, նոր կառուցված շինություն, որը դեռ չի ստացել իրավունքների պետական գրանցում: Նշված 2 գույքը նվիրատվություն է, որոնք գտնվում են Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Երրորդը բնակարան է բազմաբնակարան շենքում՝ Երեւանի Դավիթաշեն համայնքում, եւ ձեռք է բերվել 2022 թվականին:

Կատվալյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, ֆինանսական միջոցներից կա միայն 3 մլն դրամ կանխիկ դրամական միջոց: Նա նաեւ չի հայտարարագրել տարեկան եկամուտներ:

Չհայտարարագրված մեքենաների պատկերին զուգադրվում է պարոն Կատվալյանի վարած 30000 դոլար արժողությամբ Toyota Camry մեքենան: Հիշեցնենք, որ Սաշա Կատվալյանը որեւէ բիզնես չունի, ապրում է պետական աշխատավարձի հույսին:

Նրա ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ կազմել է 33 մլն 450 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Երբ Սաշա Կատվալյանը Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավար էր, 2021 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրել է 2018 թվականին նվիրատվություն ստացած անհատական բնակելի տուն, որը, սակայն, հաջորդ տարիների հայտարարագրերում չենք տեսնում: Տեղեկություն չկա նաեւ դրա վաճառքի մասին:

Հավելենք, որ Սաշա Կատվալյանը քաղաքապետարանում այլեւս որեւէ պաշտոն չունի, որեւէ հաստիք չի զբաղեցնում: Նրա մասով թե ինչ որոշում կկայացվի, անհայտ է: Քաղաքապետարանում նրա անունը չի էլ շրջանառվում:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ,
ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» Գ

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եկամտահարկի վերադարձի շնորհիվ հազարավոր մարդիկ նոր բնակարան գնելու կամ տուն կառուցելու հնարավորություն ստացան, անշարժ գույքի առաջնային շուկայի զարգացումը նոր թափ ստացավ:

Հաշվի առնելով նորակառույցներում բնակարանների ձեռք բերման նկատմամբ պահպանվող պահանջարկը՝ եկամտահարկի վերադարձից օգտվելու հնարավորությունը ներկայացնում ենք հարց ու պատասխանի տեսքով:

-Ե՞րբ կարող եմ օգտվել եկամտահարկի վերադարձից:

-Եկամտահարկի վերադարձից կարող եք օգտվել առաջնային շուկայից՝անմիջապես կառուցապատողից անշարժ գույք՝ բնակարան, թաունհաուս, առանձնատուն ձեռք բերելու կամ կառուցելու դեպքում, եթե գույքի արժեքը չի գերազանցում 55 մլն ՀՀ դրամը:

-Ի՞նչ չափով եկամտահարկ կարող եմ հետ ստանալ:

-Դուք կարող եք ստանալ առավելագույնը վճարվող տոկոսագումարի չափով եկամտահարկ: Մյուս կողմից՝ հետ ստացվող եկամտահարկի գումարը չի կարող գերազանցել Ձեր վճարած եկամտահարկի գումարը: Այսինքն՝ եթե վճարում եք 100,000 ՀՀ դրամ եկամտահարկ, իսկ տոկոսագումարը 120,000 ՀՀ դրամ է, ապա հետ եք ստանալու 100,000 ՀՀ դրամ: Իսկ եթե եկամտահարկը 120,000 ՀՀ դրամ է, իսկ տոկոսագումարը՝ 100,000 ՀՀ դրամ, կրկին ստանալու եք 100,000 ՀՀ դրամ: Եռամսյակային վերադարձի գումարը կազմում է առավելագույնը 1,5 մլն ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 500.000 ՀՀ դրամ:

Վճարվող տոկոսագումարի նվազմանը զուգահեռ՝ պակասում է վերադարձվող եկամտահարկը:

-Անշարժ գույքը կարո՞ղ է գտնվել ցանկացած վայրում:

-Այս պահին գումարի վերադարձից կարող եք օգտվել Երեւանի՝երրորդից բարձր գոտիներում, ինչպես նաեւ մարզերում գույքի ձեռք բերման/կառուցման դեպքում:

Նախատեսվում է, որ Երեւանում օրենքը կդադարի գործել 2025թ.-ի սկզբին:

-Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել Հարկային մարմին:

-Եկամտահարկի վերադարձից օգտվելու համար Հարկային մարմին պետք է ներկայացնել մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ հիփոթեքի պայմանագրի եւ ժամանակացույցի բնօրինակ, սեփականության իրավունքի գրանցման պետական վկայական, անձը հաստատող փաստաթուղթ եւ այլն:

Առավել մանրամասն տեղեկատվություն Ձեզ կարող են տրամադրել ՊԵԿ-ում:

-Ի՞նչ պետք է անել պատասխանը ստանալուց հետո:

-Ձեր դիմումի պատասխանը ստանում եք այն էլ. հասցեին, որը նշել եք դիմումի մեջ: Հաստատման դեպքում ստանում եք հղում դեպի էջ, որտեղ յուրաքանչյուր եռամսյակի վերջում դիմում եք ներկայացնում եկամտահարկի վերադարձից օգտվելու համար:

«Կոնվերսբանկ»-ն առաջարկում է առաջնային շուկայից բնակարանի/տան ձեռք բերման եւ կառուցապատման լայն գործիքակազմ, այդ թվում՝ վարկավորում տարբեր ծրագրերի շրջանակներում: Առաջարկներին կարող եք ծանոթանալ https://conversebank.am/hy/house/ հղումով կամ զանգահարելով 010-511-211:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ

ԼԻԼՈՒՆ՝ «ԿՈԿՈ» ՖԻԼՄԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Միացյալ Նահանգներում ավարտվել են հերթական գեղարվեստական ֆիլմի նկարահանումները: Ֆիլմի անունը «Կոկո» է, պրոդյուսերը Դավիթ Ադամյանն է, սցենարի հեղինակը՝ Զոհրաբ Քեկ Գասպարենցը, ռեժիսորը՝ Անգել (Էնջլ) Մարտիրոսյանը:

Ֆիլմում նկարահանվել են Նազենի Հովհաննիսյանը, Արմուշը, Լիլուն, Մոսո Կարապետյանը, Քեն Դավիդյանը, Վահագն Ստեփանյանը՝ Դելոն, եւ այլք:

Ֆիլմի պրեմիերան կայացել է երեկ՝ նոյեմբերի 16-ին, «Մոսկվա» կինոթատրոնում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում երգչուհի Լիլուն՝ Լիլիթ Ղուկասյանը, պատմել է ֆիլմում իր դերակատարման մասին:

«Հետաքրքիր նախագիծ էր, եւ շատ ուրախ եմ, որ իմ մասնակցությունն ունեցա դրանում: Առաջարկը ստացել եմ ֆիլմի պրոդյուսերի՝ Դավիթ Ադամյանի կողմից: Հոյակապ դերասանական կազմ էր հավաքված: Մեծ բավականություն եմ ստացել նկարահանումների ընթացքից, շատ թեթեւ է անցել: Պրոֆեսիոնալ դերասանների հետ հանդես գալը, իհարկե, դժվար էր, բայց մեծ պատիվ էր»:

Խոսելով կերպարի առանձնահատկությունների մասին՝ Լիլուն նշում է, որ ընդանուր գծեր չունի մարմնավորած կերպարի հետ:

«Խարդախ կերպարի եմ մարմնավորում: Աշխատում է տան տիրուհու համար՝ զուգահեռաբար խարդախություններ անելով: Ընդհանրապես կապ չունի իմ անձի հետ: Շատ հավատարիմ է իր տիրուհուն, որի կերպարը կերտում է Նազենի Հովհաննիսյանը:

Որպես այդպիսին, կապ ունի այնքանով, որ ինքը հումորով կերպար է, իսկ հումորն իմ հետ է ծնվել, որը, սակայն, ես վերջերս՝ 2020 թվականին եմ բացահայտել:

Քովիդի ժամանակ, երբ մարմնավորում էի տարբեր կերպարների, բացահայտեցի, որ կոմեդիան իմն է: Իհարկե, մինչ այդ այլ նախագծերի մեջ էլ էի իմ մասնակցությունն ունեցել, սակայն ինձ իմ ափսեում զգացի, երբ մարմնավորեցի հումորային կերպարի»:

Լիլուի խոսքով՝ պետք է յուրահատուկ հումորի զգացում ունենալ, որ կերպարի կողմից հնչեցրած սյուռ հումորները կարողանաս հասկանալ: Անդրադառնալով մոտակա ծրագրերին՝ Լիլուն նշում է, որ աշխատում է երկու-երեք երգի վրա միաժամանակ, որոնք նախատեսում է ներկայացնել մինչեւ տարվա վերջ: Երգերը գործիքավորման փուլում են:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽ

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԵՐԸ՝ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Մարիամը եւ Շամը մինչեւ 44-օրյա պատերազմը ապրում էին Շուշիում: Անցեալով պատերազմի թողած հետեւանքները՝ նրանք վերադառնում են Արցախ, ամուսնանում եւ վարձով բնակվում Ստեփանակերտում:

«Երկու անգամ շատ ծանր ավտովթարի է ենթարկվել, որ տեսնողներն անգամ զարմանում էին՝ ինչպես է ողջ մնացել: Չնայած ծանր վթարին՝ վնասվածքները թեթեւ էին: Անցել է երեք պատերազմ, ողջ առողջ վերադարձել: Պատերազմից երբեք ոչինչ չի պատմել ինձ, չգիտեմ՝ ինչ փորձությունների է ենթարկվել: Միշտ ասում էր. «Ինձ կատվի կյանք ունեմ, ամեն փորձությունից փրկվում եմ»»,- «Ժողովուրդ» օրաթերթին պատմում է Մարիամը:

Մարիամը, անդրադառնալով բլոկադային, ասում է, որ դժվարությունները շատ էին, բայց հիմա երանի է տալիս այդ նեղ օրերին, երբ բոլորով էին, միասին, ուրախ իրարով:

«2023թ. պատերազմից հետո, երբ արդեն հայտարարել էին Արցախը լքելու մասին, ամուսինս գնաց «Ցոր» զորամաս, երկար հերթ կանգնեց, սակայն հերթն իրեն չհասավ: Հայտարարեցին, որ էլ բենզին չկա: «Ցոր»-ից գնաց «Հայկազով», էլի հերթ կանգնեց: Այնտեղ գիտակցությունը վատացավ եւ ուշաթափվեց: Երբ ուշքի եկավ, շարունակեց մնալ հերթում, որովհետեւ արդեն մոտ էր իր հերթին: Այսքանը նա ինձ անձամբ է պատմել, երբ արդեն ծանր վնասվածքներով հիվանդանոցում էր»,- հուզումնախառն ասում է Մարիամը:

Շամ Սարգսյանին նախ տեղափոխել են Ստեփանակերտի Հանրապետական հիվանդանոց, այնուհետեւ ծանր վիրավորների հետ ուղղաթիռով տեղափոխել են Երեւան:

«Ծանր վիրավորների մոտ հարազատներին չէին թողնում մտնել, սակայն քանի որ քույրս բժշկական համալսարանի ուսանողուհի է, որպես բուժքույր աշխատում էր այնտեղ: Քույրս պատմում է, որ երբ մտավ հիվանդասենյակ, այդքան էլ լավ վիճակում չէր սենյակը, սկսեց հավաքել ու սրբել եւ լսում էր, որ ինչ-որ մեկը նվաղ ձայնով Ժուլի էր կանչում: Քույրս ասում է՝ անճանաչելի վիճակում էր. երբ ասաց, որ Շամն է, նոր հասկացավ, որ ամուսինս է»,- պատմում է Մարիամը:

Քրոջ միջոցով Մարիամն իմացավ՝ որ հիվանդասենյակում է ամուսինը: Շատ խնդրելուց հետո նրան թողեցին մտնել տեսակցության:

«Մտա նրա մոտ (գիտեր, որ երկար չեմ կարող մնալ), միանգամից սկսեց հարցնել երեխայից, ասացի, որ նրա հետ ամեն ինչ կարգին է: Հետո նա պատմեց պայթունի մասին, ասում էր՝ անգամ սարսափ ֆիլմերում նման պատկեր չէր տեսել: Ամբողջությամբ ծխի մեջ էին, կրակն ամբողջությամբ տարածվել էր. ձայները, այդ հոտը սարսափելի էին: Վերջում ասաց՝ ինձ կատվի կյանք ունեի, բայց այս մեկը հաստատ վերջինն է»,- պատմում է կինը:

Մարիամը նաեւ պատմեց, որ բժիշկներն ասում էին, որ շատ սուր ցավերի ժամանակ անգամ ձայն չէր հանում, կարողանում էր ինքնուրույն ջուր խմել: Այրվածքները ծանր էին, եւ ավելի շատ հետք էին թողել երիկամների վրա, ինչի պատճառով էլ նա չդիմացավ:

Հիմա Մարիամն ապրում է Չարենցավանում ամուսնու 16-հոգանոց ընտանիքի եւ բարեկամների հետ: Աշխատանք փնտրել դեռ չի փորձում, ասում է՝ երեխան շատ է փոքր, մենակ թողնել չի կարող:

ՍՊՈՐՏ

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄ

Իտալական «Միլանի» եզրային պաշտպան Ալեսանդրո Ֆլորենցիին սպառնում է երկարաժամկետ որակազրկում անօրինական հարթակներում խաղադրույքներ կատարելու համար. հաղորդում է AGI-ն:

Դատախազությունը սկսել է հետաքննություն, Ֆլորենցին ունի կասկածյալի կարգավիճակ:

Նույնկերպ գործող անգլիական «Նյուքասլի» իտալացի կիսապաշտպան Սանդրո Տոնալին որակազրկվել էր 12 ամսով եւ չի կարողանա մասնակցել «Եվրո-2024»-ին:

ԻՆՔՆ ԻՐԵՆ ՎՆԱՍԵԼ Է

Թուրինում ընթացող ATP Finals-ում (Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի տարվա ամփոփիչ առաջնություն) աշխարհի 5-րդ ռակետ, ռուսաստանցի Անդրեյ Ռուբլյովը խմբային փուլի երկրորդ տուրում 5:7, 2:6 հաշվով պարտվել էր աշխարհի երկրորդ ռակետ, իսպանացի Կառլոս Ալկարասին՝ զրկվելով կիսաեզրափակիչ դուրս գալու հնարավորությունից:

Այդ մրցախաղում Ռուբլյովը մի դրվագում վեց անգամ ռակետով հարվածել է ծնկին՝ հասցնելով արնահոսող վնասվածք: Հետխաղային ասուլիսում Ռուբլյովը հայտարարել է, որ ոչ մի լուրջ բան չկա, առողջական խնդիր չունի:

ԾԱՌՈՒԿՅԱՆԸ՝ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԻՆ

Խառը մենամարտերի թեթեւ քաշային կարգում UFC դասակարգման 8-րդ համար Արման Ծառուկյանը խոսել է դասակարգման չորրորդ համար, ամերիկացի Բենեիլ Դարիուշի նկատմամբ իր առավելությունների մասին: Նրանց մենամարտը տեղի կունենա դեկտեմբերի 2-ին ԱՄՆ-ի Օսթին քաղաքում UFC Fight Night մրցաշարում:

«Երկրպագուները կարող են ակնկալել իմ լավագույն մրցելույթը: Կլինի լավագույն նոկաուտը: Վստահ եմ, որ ժամանակից շուտ կավարտվի մենամարտը: Եթե ես ցանկանում եմ հետագայում պայքարել տիտղոսի համար, պետք է նոկաուտով հաղթեմ Դարիուշին, որին շատ եմ հարգում: Գամրոտի հետ մենամարտից առաջ երբեք հինգ ռաունդ չէի ունեցել: Հիմա ես ունեմ փորձ, գիտեմ՝ ինչպես բաշխել ուժերը»,- Ծառուկյանի խոսքը մեջբերում է Middle Easy-ին: 2022թ. հունիսին Ծառուկյանը լեհ Մատեուշ Գամրոտի հետ մենամարտում պարտվել էր մրցավարների միաձայն որոշմամբ:

● Նոյեմբերի 18-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «44 աստիճանի վրա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաճախ ենք լսում քաղաքացիական պաշտպանության ծառայությունների եւ կազմավորումների մասին. ինչե՞ր են դրանք:

Մուշեղ Առաքելյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունները ստեղծվում են պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաեւ պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, որոնք նախատեսված են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով ոլորտային (բժշկական, էներգետիկայի, տրանսպորտային, կոմունալ-տեխնիկական եւ այլն) խնդիրների լուծման համար:

Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ընդհանուր խնդիրներն են՝

- քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը եւ իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության ժամանակ գործելու դեպքում,
- քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը եւ մշտական պատրաստականության վիճակում պահպանումը,
- ստեղծված իրադրության մասին ոլորտային տեղեկատվության ստացման, վերլուծման եւ գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խոցման օջախներում փրկարարական եւ վթարավերականգնողական աշխատանքների կատարման համար համայնքներում, կազմակերպություններում ստեղծվում են ինժեներական, վթարատեխնիկական, գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության, հետախուզական եւ քաղաքացիական պաշտպանության այլ կազմավորումներ: Դրանց անհրաժեշտ տեսակները, թիվը, կազմակերպական կառուցվածքը եւ հագեցվածության նորմերը մշակում ու հաստատում են կազմավորումներ ստեղծող քաղաքացիական պաշտպանության պետերը (համայնքների ու կազմակերպությունների ղեկավարները):

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե երեխայի ավագ եղբայրը կամ քույրը հաճախում են տվյալ դպրոց, ապա նրան որեւէ արտոնություն տրվո՞ւմ է:

Մովսես Երիցյան (40 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ ցանկացած ծնող իրավունք ունի երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը եւ կրթության ձեւը: Հետեւաբար, որեւէ չափանիշ, ներառյալ բնակավայրին կամ աշխատանքի վայրին մոտ գտնվելու կամ տվյալ դպրոց հաճախող քույր կամ եղբայր ունենալու փաստը, չի կարող որեւէ երեխայի գրանցման համար առաջնահերթություն ապահովել:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ցանկանում եք, որ Ձեր երեխան սովորի հենց Ձեր նախընտրած դպրոցում, ապա հարկավոր է հնարավորինս շուտ գրանցվել առցանց համակարգի միջոցով, քանի դեռ տվյալ դպրոցի համար սահմանված տեղերը չեն սպառվել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի բռնցքամարտի կանանց հավաքականի անդամներ Էլիդա Քոչարյանն ու Սոնա Հարությունյանն առնվազն բրոնզե մեդալներ են ապահովել Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում ընթացող Եվրոպայի Մ22 տարեկանների առաջնությունում:

Կանանց 60 կգ քաշային կարգում Էլիդա Քոչարյանը քառորդ եզրափակչում մենամարտել է Իտալիայի ներկայացուցիչ Ֆերանտե Դոնատելայի հետ եւ հաղթել է 5:0 հաշվով՝ դուրս գալով կիսաեզրափակիչ եւ ապահովելով առնվազն բրոնզե մեդալ: Քառորդ եզրափակչում 5:0 հաշվով հաղթանակ է տարել եւ կիսաեզրափակիչ է դուրս եկել նաեւ 63 կգ քաշային Սոնա Հարությունյանը: Նա առավելության է հասել Բելառուսի ներկայացուցիչ Վալերիա Ստրիժակի նկատմամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անվճար կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 1 + 2	+ 6 + 9
Կոտայքի լեռներ	0 + 3	+ 5 + 7
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7	+11 + 13
Գեղարքունիք	- 1 + 3	+ 5 + 9
Լոռի	+ 1 + 6	+11 + 14
Տավուշ	+ 3 + 8	+13 + 17
Արագածոտնի լեռներ	- 1 + 2	+ 5 + 9
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8	+ 10 + 14
Արարատ	+ 8 + 11	+12 + 15
Արմավիր	+ 7 + 10	+12 + 15
Վայոց ձորի լեռներ	0 + 3	+ 6 + 9
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 8	+12 + 15
Սյունիքի հովիտներ	+6 + 10	+16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 + 3	+11 + 14
ԼՂՀ	+6 + 8	+11 + 14
Երեւան	+ 7 + 9	+16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*